

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртытиун» (образование) еженедельник 13.03.2024թ. Հորեքշաբթի թիվ 12 (1141)

Մեծերը



ՖԱՏԱԼԱԻՐ

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած. Ծնվում են նրանք ծի՛շտ ժամանակին: Եվ ժամանակից առաջ են ընկնում, Դրա համար էլ չեն ներում նրանց...
Պարույր Սեվակ

Մեծերը գալիս, հայտնվում, ապրում, գործում, նահատակվում, ամնահանում են մե՛զ համար: Դեռ երկրային կյանքի ընթացքում **անանձնանում**, որքան մեծ՝ իրենց անհատականությամբ, այնքան դյուրին տարրալուծվում, որպես **աղը աշխարհի**, ընկղմվում մեր էության մեջ, մեր ինքնությունն են կազմում...

Մեծերը գալիս, հայտնվում, վերադառնում են անվերջ, ամեն մի պահի, երբ մեր **գոյությունն** է վտանգվում, որովհետև պահապաններն են մեր գոյության, որովհետև նրանց առաքելությունը մեր գոյությունն է հենց, ու իրենք էլ մեր գոյության մեջ **ներկա՝ են ընդմիջտ:**

Գ.Մ.

Այսօր եղիշե Չարենցը դարձավ 127 տարեկան:

Գարնանային

Գարուն է: Հողն արթնացել, դեն է նետել իր ճերմակ սավանը, ոտքի ելել նոր քայլել սովորող մանկան պես, անվարժ շարժումներով իր կանաչ հանդերձներն է փորձում հագնել...

Ու մինչ **ժամանակն** օրեր անց կիստի գարնանային գիշերահավասարը, եւ **Տիեզերքը** կսկսի իր նոր տարեգրությունը՝ **Բնության** նոր տարին, **Մարդն** իր հոգեւոր զարթոնքն ուղղորդում է դեպի **Աշխատանք:**

Ընտանիքը եւ **Հասարակությունը**, համալրվել լավատեսությամբ, նոր **Մեկնարկի** ակնկալիքով, մաքրում են տուն ու բակ, փողոց ու քաղաք...

Առջեւում գարնան **երազն** է, ամռան **Գործը**, աշնան **Հուշը**... Ու բոլորը միասին՝ **Կյանքը՝ ժամանակի ու Տարածության** հետ **երկնքից** մշտապես մեզ իջնող պարգևեր մեծագույն:

Գ.Մ.

տե՛ս նաեւ՝ էջ 8-9



Գարնանային արձակուրդը կմեկնարկի մարտի 18-ից

Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում **մարտի 18-ից** կսկսվի գարնանային արձակուրդը: Համաձայն «Հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2023-2024 ուսումնական տարվա օրինակելի ուսումնական պլանների»՝ **3-12-րդ դասարանների աշակերտներին գարնանային արձակուրդ կտրամադրվի 2024 թվականի մարտի 25-ից մինչեւ մարտի 31-ը ներառյալ: Առաջին դասարանցիների գարնանային արձակուրդը կտեւի մարտի 18-ից մինչեւ մարտի 31-ը ներառյալ: Երկրորդ դասարանցիների գարնանային արձակուրդը կտեւի մարտի 25-ից մինչեւ մարտի 31-ը ներառյալ:**

Մարտի 8-ի առթիվ

ՀՀ Վարչապետ Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԻ շնորհավորական ուղերձը



Սիրելի՛ կանայք, Ընդհանուր մեծ բուրիդ եւ յուրաքանչյուրիդ՝ Մարտի 8-ի՝ կանանց տոնի առիթով: Խոսելով կանանց մասին՝ մենք խոսում ենք Հայաստանի Հանրապետության բնակչության մեծամասնության մասին, որովհետեւ Հայաստանի Հանրապետության բնակչության 53 տոկոսը կանայք են:

Ու ինձ համար, որպես երկրի վարչապետ, այս օրը, նախելառաջ, մեր երկրի զարգացման գործում կանանց պոտենցիալի լիարժեք ներգրավման մասին եւս մեկ անգամ խորհելու առիթ է: Ի սկզբանե էլ Մարտի 8-ը հիմնադրվել է կանանց աշխատանքային, քաղաքական, կրթական եւ այլ իրավունքների պաշտպանության համատեքստում, ու նաեւ սա է այդ ընկալման պատճառը:

Մեր կառավարության համար առաջնահերթություն է պետական կառավարման, իրավապահ, անվտանգային, տնտեսական, քաղաքական, գիտական եւ այլ ասպարեզներում կանանց առավելագույն ներգրավման համար հնարավորություններ ստեղծելը, որովհետեւ ակնհայտ է, որ առանց այդ պոտենցիալի լիարժեք կիրառման, մեր երկրի զարգացման հնարավորություններն էականորեն կկրճատվեն:


Այսօր ուրախությամբ եւ հպարտությամբ ենք արձանագրում, որ Հայաստանի բազմաթիվ կանայք ներգրավված են տնտեսական գործունեության մեջ եւ ամենօրյա ստեղծարար աշխատանքով արժեք են ստեղծում, հարկեր վճարում:

շարունակությունը՝ էջ 2

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից կանանց տոնի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում եւ շնորհավորում բոլոր տիկնանց եւ օրհորդաց՝ ի Հայաստան եւ ի Սփյուռս:

Կնոջ դերը միշտ արժեւորվել է մեր ժողովրդի կյանքում, հատկապես՝ կարեւորվել նրա առաքելությունը՝ ընտանիքում զավակների դաստիարակության, սերունդների կրթության գործում: Այսօր, երբ ընդլայնվել են կանանց գործունեության ոլորտները, արդարեւ, մեծ է մեր մայրերի ու քույրերի ավանդը ազգային եւ եկեղեցական կյանքում:



Ներկայիս մեր հայրենիքն ու համայն հայությունը կանգնած են բարդ մարտահրավերների առջեւ: Դժվարին այս ժամանակներում առավել նվիրում ու խնամք է պահանջվում հանուն ազգային-հոգեւոր արժեքների զորացման, աշխարհասփյուռ մեր ժողովրդի համերաշխության ու միասնականության ամրապնդման եւ մեր երկրի խաղաղ ու բարօր գալիքի կերտման:

Մեծագնիվ տիկնայք եւ օրհորդներ, Իջման Սուրբ Սեղանի առջեւ համապագ Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Աստված Իր օրհնության ներքո պահպանի ձեզ հույսով ու հավատով առլեցուն, հաստատուն՝ բարի գործերի ու առաքինությունների մեջ եւ քաջառողջ ու երջանիկ՝ ձեր ընտանիքների ու սիրելիների հետ:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, շնորհները եւ ողորմությունը թող միշտ լինեն ձեզ հետ. ամեն:

Կառավարության որոշումով

Միջոցների վերաբաշխում՝ 1 միլիարդ 367 միլիոն 925 հազար դրամի չափով

ՀՀ կառավարության որոշմամբ՝ 2024 թվականի պետական բյուջեով ԿԳՄՍ նախարարությանը կապիտալ ծրագրերի իրականացման համար հատկացված միջոցներից կատարվել է վերաբաշխում 1 մլրդ 367 միլիոն 925 հազար դրամի չափով: Որոշման նպատակն է ֆինանսական միջոցներ հատկացնել մի շարք կրթական և մարզական հաստատությունների ավարտական աշխատանքների ապահովման համար:

Հարցը զեկուցել է ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը: Նա տեղեկացրել է, որ որոշումը վերաբերում է 2 մանկապարտեզի, 6 մոդուլային դպրոցի, 1 ավագ դպրոցի մասնաշենքի, 15 դպրոցի մարզադահլիճի կառուցման, 11 դպրոցի մարզադահլիճի վերակառուցման, ինչպես նաև 8 դպրոցի նախաձեռնախառնակային փաստաթղթերի մշակման և փորձաքննության ծառայությունների աշխատանքներին: «Գրեթե բոլոր օբյեկտներում ավարտական աշխատանքների փաստացի ծավալների ճշգրտման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել կատարելու ծավալների ավելացում: Հաշվի առնելով, որ օբյեկտների աշխատանքների կատարման ժամկետներն ավարտվել են 2023 թվականին, որոշմամբ նախատեսվում են մի շարք թույլտվություններ, որպեսզի Քաղաքաշինության կոմիտեն կարողանա համաձայնագրեր կնքել՝ ծավալների ավելացում կատարելու նպատակով»,- նշել է նախարարը:

Որոշմամբ Երևանի թիվ 92 հիմնական դպրոցի մարզադահլիճի և հանդիսությունների դահլիճի մասնաշենքի վերակառուցման համար նախատեսվում է թույլտվության ծավալների ավելացման թույլատրելի 10 տոկոսը գերազանցելու համար, ինչի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքների կատարման ընթացքում պարզ է դարձել մասնաշենքերը կապող տականցումը քանդման ենթակա է, և այդ հատվածը պետք է կառուցվի վերակառուցման փոխարեն:

Միաժամանակ, Մեղրվայի միջնակարգ դպրոցի և Հազվու հիմնական դպրոցի կառուցման աշխատանքների ծավալներն են ավելացվում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կարելու է հաստատությունների շահագործման հանձնվելու հստակ ժամկետներ և պատշաճ տեխնիկական բնութագրեր սահմանելու անհրաժեշտությունը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի համակարգմամբ գործընկերների հետ իրականացվում են անհրաժեշտ աշխատանքներ, և որոշման նախագծով նախատեսված բոլոր օբյեկտների շահագործման ժամկետները հստակեցված են ներկայացնելով դրանք:

Անդրադառնալով գույքի տրամադրման հարցերին՝ նախարարն ընդգծել է, որ մինչև նոր ուսումնական տարին գույքի մասով խնդիրներն ամբողջովին կարգավորված կլինեն: Նախարարը նշել է նաև, որ, որոշ մարզական գույքերի տեխնիկական բնութագրերը էապես վերանայվում են, և որակական նոր ու բարելավված պահանջներ են սահմանվում, օրինակ՝ շվեդական պատերի, ցատարանների և գուլգոպայտերի մասով: Նախարարն անդրադարձել է նաև գույքի պատշաճ պահպանման պայմաններին:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա ԱՆԴՐԵԱՍՅԱՆԻ շնորհավորական ուղերձը՝ Մարտի 8-ի առթիվ



Սիրով և ջերմությամբ շնորհավորում եմ Կանանց միջազգային օրվա կապակցությամբ: Մարտի 8-ը կանանց դերակատարումն ընդգծելու, խրախուսելու, նրանց ստեղծարար ներուժն արժեւորելու, եղած խնդիրների մասին մտածելու լրացուցիչ առիթ է: Կանանց դերը մշտապես շրջադարձային և որոշիչ է եղել տարբեր հասարակություններում և բոլոր ժամանակներում: Հատկապես մեր օրերում չկա մի ոլորտ, որտեղ կանայք ասելիք, անելիք և նշանակալի ներդրում չունենան:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում կնոջ գործունեությունն առանձնակի կարևոր է, քանի որ հենց այս ասպարեզներում է ձևավորվում հասարակության ապագան՝ շնորհիվ արժեքների, ստեղծագործության, նվաճումների և հաղթանակների: Մարտահրավերներին դիմակայելու կանանց միասնականությունն ու համախմբումը չբացահայտված մեծ ներուժ ունեն, որը կարող է հասարակության և պետության զարգացմանը հավելյալ խթան հաղորդել և առաջընթացի նոր ուղիներ բացել:

Այս ամենը մեզ մղում է ամեն օր խրախուսելու և աջակցելու կանանց, ստեղծելու նոր հնարավորություններ նրանց կարողությունները զարգացնելու և կատարելագործելու ուղղությամբ: Եվ, իհարկե, այս համատեքստում չափազանց կարևոր է նախելառաջ ճանաչել, գնահատել և վերաբեռնել մեր պետության կայացման գործում երբեք կարելու դերակատարում ունեցած կանանց:

Սիրելի՛ կանայք և աղջիկներ, խիզախորեն գնացեք ձեր երազանքների և նպատակների հետևից՝ հանդգնվեցե՛ք, որ շարունակական ու հետևողական ջանքերն անպայման արդյունք են տալիս:

Մաղթում եմ ձեզ գործելություն, անսպառ եռանդ, դժվարություններից չվիտակվելու կարողություն, սեր և ներդաշնակություն ընտանիքում, նորանոր ձեռքբերումներ մասնագիտական գործունեության, պետության զարգացման ասպարեզում:



Նկարը՝ Մարտիրոս Սարյանի

Երևանի պետական բժշկական համալսարան

«Բարձրորակ բժշկական կրթությունը հասարակության կյանքի որակի կարեւոր ցուցիչ է»

Նախարար Ժաննա Անդրեասյանը մասնակցել է Երևանի պետական բժշկական համալսարանի գիտական խորհրդի նիստին, որի ընթացքում կայացել է «Բուժական գործ» եռալեզու կրթական ծրագրերի NCEQE (National Center for Educational Quality Enhancement) կառույցի կողմից միջազգային հավաստագրման հավաստագրի շնորհման հանդիսավոր արարողությունը:



Միջոցառմանը ներկա են եղել նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրապետյանը, WFME (World Federation for Medical Education) կազմակերպության ներկայացուցիչները, բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները:

ԿԳՄՍ նախարարը շնորհավորել է ներկաներին՝ նշանակալի իրադարձության առիթով և շնորհակալություն հայտնել բուհին՝ տարիների հետևողական, որակյալ և անխնայ աշխատանքի համար, որը տալիս է սպասված արդյունք: «Բժշկական կրթությունն առանձնահատուկ ուղի է, որի կարգավորումները տարբեր երկրներում լրացուցիչ ընթացակարգեր են պահանջում: Եվ, հետևաբար, էլ ավելի կարեւոր է արձանագրված արդյունքը. այդ առանձնահատկությունների մեջ լինել լինել ճանաչելի, ընդունված և գնահատված, նշանակում է՝ կայուն որակ: Աշխարհում գործող շուրջ 4 հազար բժշկական հաստատությունների 10 տոկոսում ներառված լինելն արդեն իսկ պատիվ է և հարգություն»:

Մեր կատարած ծրագրերն ու հարթակները ճանաչելի են: Մեր շրջանավարտներն ընկալելի են իրենց ավարտական փաստաթղթով, իրենց գիտելիքով և հմտություններով: Համոզված եմ՝ այս իրադարձությունը մեծ հնարավորություններ կբացի մեր շրջանավարտների առջեւ»,- ասել է Արմեն Մուրադյանը:

ԵՊԲՀ ռեկտոր Արմեն Մուրադյանը եւս փաստել է վերջապես ամփոփվում է տասնյակ տարիների կատարած մեծածավալ աշխատանքը: Ռեկտորի խոսքով՝ այդ աշխատանքների և բուհի միջազգայնացման առաջնությունը դրված առաջնային նպատակի՝ բժշկական որակյալ կրթություն է՝ ներդաշնակ աշխարհի բոլոր կրթական համալիրների հետ, որոնք ունեն ճանաչելիություն: «ՀՀ կառավարությունը որդեգրել է բուհերի միջազգայնացման ռազմավարություն, որը նաև իր թվային արտադրումը պետք է ունենա: Աշխարհում գործող շուրջ 4 հազար բժշկական հաստատությունների միայն 10 տոկոսը՝ 400-ն ունի այս հավաստագիրը:

Նշենք, որ WFME-ը ՄԱԿ-ի կողմից ստեղծված կառույց է, որի հիմնական առաքելությունը բժշկական կրթության միջազգային կարգավորումն է: Այն իրականացնելու համար ստեղծվել է վերանշակվել են համապատասխան չափանիշներ: Լայն իմաստով՝ WFME չափանիշներով սահմանվում է, թե որ կրթությունը կարելի է համարել միջազգայնորեն ընդունելի բժշկական կրթություն:

Հավատարմագրումը հնարավորություն է տալիս ընդլայնել միջազգային ուսանողների աշխարհագրությունը, ավելացնել ուսումնառության վարձաչափերը, որպես առավել վստահելի կառույց՝ խթանել կրթությանն ուղղված միջազգային դրամաշնորհները, ամուր դիրքերում հայտնվել տարածաշրջանային մրցակցության դաշտում և այլն:

Փոփոխություններ՝ նշանակման կարգում

ՀՀ կառավարության որոշմամբ՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգում կատարվել են փոփոխություններ և լրացումներ:

Գործող կարգով սահմանվում է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կամ մարզպետարանի կամ Երևանի քաղաքապետարանի համապատասխան ստորաբաժանումը, ըստ ենթակայության, տվյալ հաստատության համակարգողի պաշտոնավարման ժամկետը լրացնելու կամ տվյալ հաստատության համակարգողի թափուր տեղ առաջանալու (այդ թվում՝ կառավարման նոր համակարգի անցմանը) դեպքում՝ օրվանից հաշված՝ առավելագույնը 30, բայց ոչ պակաս, քան 25 աշխատանքային օր առաջ հրապարակում է հայտարարություն պետական ուսումնական հաստատության համակարգողի թափուր տեղի գրառման համար: Սակայն թափուր տեղ առաջանալու ոչ բոլոր հիմքերն է հնարավոր կանխատեսել, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել հստակեցնել հայտարարության հրապարակման հիմքերը: Սահմանվել են համակարգողի թափուր տեղի համար հայտարարության վերաբերյալ պահանջները, թվարկվել են համակարգողի թափուր պաշտոն առաջանալու բոլոր դեպքերը:

Գործող կարգով սահմանվում է, որ հավանորդների հետ հարցազրույց անցկացնում է լիազորված մարմնի ղեկավարը, ինչը, պայմանավորված օբյեկտիվ պատճառներով, երբեմն կարող է անհնար լինել: Արդյունքում՝ հարցազրույցը չի կայանում, և ուսումնական հաստատությունում համակարգողի գործառույթները չեն կատարվում, ինչն էլ իր հերթին հանգեցնում է ուսումնական գործընթացի ոչ պատշաճ կազմակերպման: Այդ պատճառով՝ որոշմամբ կատարվել է եւս մեկ փոփոխություն, որով լիազորված մարմնի ղեկավարի կողմից հարցազրույցն անցկացնելու անհնարինության դեպքում այն անցկացնելու իրավասություն է տրվել նաեւ լիազորված մարմնի ղեկավարի տեղակալին:

Նախագիծ

Փոփոխություններ և լրացումներ՝ «Հանրակրթության մասին» օրենքում

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «*«Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*» օրենքի նախագիծը:

Գործող օրենսդրություն

Հավաստագիրը տրվում է 5 տարի ժամկետով, որի ընթացքում ամբողջությամբ է ստանում դիմելու և մասնակցելու տնօրենի թափուր տեղի համար անցկացվող մրցույթին, իսկ նշանակվելուց հետո տնօրենի պաշտոնավարման համար հիմք է կնքված պայմանագրի ժամկետը: «*Հանրակրթության մասին*» օրենքի համաձայն սահմանված կարգով աշխատանքային պայմանագիր կնքած պետական ուսումնական հաստատության տնօրենը պաշտոնավարում է մինչև իր լիազորությունների ավարտը՝ անկախ ուսաստատության ղեկավարման իրավունքի՝ հավաստագրի հնգամյա ժամկետը լրանալուց: Կառավարման նոր համակարգի անցած հաստատության տնօրենի պաշտոնավարման հնգամյա ժամկետը լրանալու դեպքում զարգացման ծրագրի կատարողականի դրական արդյունքով տնօրենի հետ կնքվում է պաշտոնավարման հնգամյա նոր պայմանագիր, սակայն հավաստագրման պահանջ սահմանված չէ: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել

Տարակարգի շնորհման համար դիմելու ձեւաչափ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացնում է, որ համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների տարակարգի շնորհման համար դիմելիս անհրաժեշտ է առաջնորդվել փաստաթղթեր ներկայացնելու հետևյալ ձեւաչափով:

1. Մանկավարժական աշխատող տարակարգի շնորհման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային տարբերակով:
2. Մանկավարժական աշխատող դիմումը լրացնելիս նշում է նախադպրոցական ուսումնական հաստատության (այսուհետ՝ հաստատություն) տվյալները, տարիքային խումբը, որում աշխատում է տվյալ ուսումնական տարում և տարակարգի աստիճանը, որի համար դիմում է: Դիմումի վերջում գրում է. «*Կից ներկայացնում եմ ուղարկվող փաստաթղթերի և նյութերի ցանկը*» նախադասությունը և դրանից հետո թվարկում ներկայացվող փաստաթղթերի անվանումները: Դիմումի տարբերակը ներկայացվում է ՀԱՎԵԼՎԱԾ-ում:
3. Մանկավարժական աշխատող ներկայացվող բոլոր փաստաթղթերը հավաքում է էլեկտրոնային թղթապանակներում: Յուրաքանչյուր թղթապանակ կրում է այն բնութագրիչի համարը, որով մանկավարժական աշխատողը դիմում է տարակարգի շնորհման համար: Այդ թղթապանակում տեղադրվում են տվյալ բնութագրիչով պահանջվող համապատասխան նյութերը: Այլ անվանումներով թղթապանակները չեն դիտարկվելու:
4. Նախադպրոցական կրթական հիմնական (փորձարարական) ծրագրերով աշխատող հաստատությունների մանկավարժական աշխատողներն իրենց թղթապանակների բովանդակությունը ներկայացնում են փորձարկվող ծրագրերի պահանջներին համապատասխան:
5. Նախադպրոցական կրթական համալիր ծրագրերով աշխատող հաստատությունների մանկավարժական աշխատողներն իրենց թղթապանակների բովանդակությունը ներկայացնում են համալիր

ծրագրերի պահանջներին համապատասխան:

6. Տեքստային նյութերը ներկայացվում են .doc կամ .docx կամ .pdf ձեւաչափով:
7. Նկարները ներկայացվում են jpg կամ png ձեւաչափով:
8. Տեսագրությունները ներկայացվում են ամբողջական MP4 ձեւաչափով:
9. 1-ին բնութագրիչով դիմելու դեպքում մանկավարժական աշխատող ներկայացնում է տեղեկանք այն կազմակերպությունից, որում ներգրավված է որպես վերապատրաստող: Տեղեկանքում նշվում է վերապատրաստումների իրականացման ժամանակահատվածը և ծրագրային այն բաժինը, որը վարել է մանկավարժական աշխատողը:
10. 2-րդ բնութագրիչով դիմելու դեպքում մանկավարժական աշխատող ներկայացնում է ուսումնական, ուսումնամեթոդական ձեռնարկը կամ ուսումնասոսանակ նյութը երաշխավորելու մասին Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը:
11. 3-րդ բնութագրիչով դիմելու դեպքում մանկավարժական աշխատող ներկայացնում է վերջին հինգ տարվա ընթացքում «Տարվա լավագույնները» մրցույթի անվանակարգերից մեկում հաղթող ճանաչված լինելու մասին Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը:
12. 4-րդ բնութագրիչի «գ» ենթակետով դիմելու դեպքում ֆիզիկահանգիչը և երաժշտության դաստիարակը ներկայացնում են բոլոր այն տարիքային խմբերի համար երեք ամսվա ընթացքում կազմած ուսումնասիրական աշխատանքների պլանավորումը, որոնցում աշխատում են տարակարգի շնորհման համար դիմելու պահին և նախորդ վեց ամսվա ընթացքում իրենց մոտ կատարված պարապմունքների և տարբեր ռեժիսային պահերի դիտումների, լսումների արձանագրությունները:
13. 5-րդ բնութագրիչը պարտադիր է տարակարգի շնորհման համար դիմող դաստիարակների, ֆիզիկահանգիչների և

երաժշտության դաստիարակների համար: Նշված բնութագրիչով դիմելու դեպքում մանկավարժական աշխատողը ներկայացնում է տարակարգի համար դիմելու օրվան նախորդող վեց ամսվա ընթացքում դիմակատիական տարբեր նպատակներով իրականացված երկու պարապմունքի կամ մեկ պարապմունքի և մեկ խաղ-զվարճախմբի պլանավորում և տեսագրություն: Տեսագրության հետ ներկայացվող պլանավորման մեջ հստակ ներկայացված պետք է լինի պարապմունքի/խաղ-զվարճախմբի սկիզբը, ընթացքը և ավարտը:

Մեթոդատեղի կարող են ընտրել այս բնութագրիչը:

1. 6-րդ բնութագրիչով դիմելու դեպքում մանկավարժական աշխատող ներկայացնում է տվյալ ուսումնական տարում մշակված անհատական ուսուցման և զարգացման պլան (այսուհետ՝ ԱՌԶՊ), կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿՁԱԿԿ) ունեցող սաների կրթության և զարգացման արդյունավետության մասին վկայող փաստեր՝ ԿՁԱԿԿ գնահատման արդյունքի փոփոխություն (առկայության դեպքում):
 2. 7-րդ բնութագրիչով դիմելու դեպքում նախադպրոցական կրթական հիմնական (փորձարարական) ծրագրերով աշխատող հաստատությունների մանկավարժական աշխատողները ներկայացնում են տվյալ ուսումնական տարում սաների զարգացման և կրթության արդյունքի գնահատման ընթացքը հավաստող փաստաթղթեր՝ ըստ նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերի պահանջներին:
 3. 7-րդ բնութագրիչով դիմելու դեպքում նախադպրոցական կրթական համալիր ծրագրերով աշխատող հաստատությունների մանկավարժական աշխատողները ներկայացնում են տվյալ ուսումնական տարում սաների զարգացման և կրթության արդյունքի գնահատման ընթացքը հավաստող այն փաստաթղթերը, որոնք կիրառվում են իրենց հաստատություններում:
- Ներկայացված ձեւաչափին չհամապատասխանող փաթեթները չեն դիտարկվելու:

Աշխարհի հետ

Հայաստանի եւ Հնդկաստանի միջեւ համագործակցության խորացման համար

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը** եւ ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան **Նիլալա Սահա Սինհան** մասնակցել են Հնդկաստանի տեխնիկական եւ տնտեսական համագործակցության (ITEC) օրվան նվիրված միջոցառմանը:

Այս տարի լրանում է ՀՀ-ում իրականացված (ITEC) 60-ամյակը. այն Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության կարողությունների զարգացման առաջատար հարթակն է, որը վերապատրաստել է շուրջ 160 երկրի ավելի քան 200.000 պաշտոնյայի ինչպես քաղաքացիական, այնպես էլ պաշտպանական ոլորտում:

ՀՀ քաղաքացիները 1999 թվականից են մասնակցում ՀՀ-ում (ITEC) ծրագրին. այս ընթացքում տարբեր մասնագիտությունների գծով ծրագրից օգտվել են շուրջ 400 հայ մասնակիցներ:

Ողջունելով ներկայացրած ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը կարեւորել է Հնդկաստանի Հանրապետության հետ բարեկամական ու փոխշահավետ կապերի ամրապնդումն ու համագործ-



ծակցային նոր հարաբերությունների կայացումը: Նրա խոսքով՝ ITEC ծրագիրը կարելի է հենարան հանդիսանալու միջոցով համագործակցության ընդլայնման եւ խորացման համար: «2014 թվականից ի վեր՝ Հնդկաստանը միջազգային կարողությունների զարգացման շուրջ 100.000 դասընթացներ է կրթաթոշակներ է առաջարկել Հնդկաստանի առաջնակարգ հաստատություններում ընթացող Հնդկաստանի մշակույթը

ու հյուրընկալությունը զգալու հնարավորություն»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը:

Հնդկաստանի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992 թվականի օգոստոսի 31-ից: Համագործակցությունն իրականացվում է մի շարք ստորագրված փաստաթղթերի շրջանակում, որոնց մի մասն ընդգրկում է հենց կրթության, գիտության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդական քաղաքականության իրականացման ոլորտները: Նախարարի տեղակալի խոսքով՝ ԿԳՄՍ համակարգում ուղարկվում հայ-հնդկական համագործակցությունն առավել տեսանելի է, մասնավորապես, բարձրագույն կրթության ոլորտում՝ ի դեմս Հնդկաստանի հարգարվոր քաղաքացիների, որոնք բարձրագույն կրթություն են ստանում Հայաստանի բուհերում: «Լիախույս ենք, որ այդ թիվը ժամանակի ընթացքում էլ ավելի կմեծանա: Հավատացած ենք երկրների միջեւ համագործակցությունն ընդգրկում է նաեւ մարդկանց միջեւ բարի, ջերմ բարեկամական հարաբերությունների ձեւավորումը: Կրթությունը, մշակույթն ու միջմշակութային հաղորդակցությունն են, որ միավորում են բարե-

կամ ժողովուրդներին եւ պետություններին»,- նշել է Արթուր Մարտիրոսյանն ու կարեւորել ITEC-ի շրջանավարտների ներդրումը մեր երկրի հանրային կյանքում:

ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Նիլալա Սահա Սինհան ուրախությամբ փաստել է ՀՀ-ում շրջանավարտներն այսօր կարեւոր դերեր են զբաղեցնում Հայաստանում: Ամեն տարի Հայաստանին առաջարկվում է 40 տեղ: Այդուհանդերձ, վերջին մի քանի տարիների ընթացքում նկատվել է զրանցման անկում. դեսպանը հայ մասնագետներին կոչ է արել օգտվել այս հնարավորությունից. «Այցելելով մեր երկիր՝ դուք դառնում եք մեր մեծ ընտանիքի եւ Հնդկաստան կոչվող խճանկարի մի մասը: Դուք մեր դեսպաններն եք, որպեսզի աշխարհն իմանա իրական Հնդկաստանի պատմությունը: Հնդկաստանը միշտ հավատացել է իր գիտելիքների եւ փորձի փոխանակմանը բոլոր ոլորտներում, քանի որ մենք անկեղծորեն հավատում ենք, որ մարդու գիտելիքներն աճում են միայն այն ժամանակ, երբ դրանցով կիսվում են»,- նշել է Նիլալա Սահա Սինհան:

Հայաստան-Իրան. մշակութային առնչությունների ընդլայնում

2024 թ. մարտի 4-8-ը Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրանում տեղի է ունեցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո գործող Արեւմտյան եւ Կենտրոնական Ասիայի ոչ նյութական մշակութային ժառանգության տարածաշրջանային հետազոտությունների Թեհրանի կենտրոնի գործադիր խորհրդի 3-րդ համընկալումը:

Հանդիպմանը Հայաստանից մասնակցել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության վարչության մշակութային ժառանգության պահպանության ու զարգացման բաժնի գլխավոր մասնագետ **Նահրա Կիլիչյանը**:

Հայաստանը Թեհրանի կենտրոնին անդամակցում է 2015 թվականից, որի ընթացքում, պարբերաբար, մասնակցում է կենտրոնի կողմից իրականացվող ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված ծրագրերին, ցուցահանդեսներին, լուսանկարչական մրցույթներին եւ կարողությունների զարգացման դասընթացներին: Մասնավորապես՝ կենտրոնի



հետ համագործակցությամբ Հայաստանում երկու անգամ՝ 2017 եւ 2019 թվականներին, դասընթացներ են կազմակերպվել «Կոմ-վենցիայի ցանկերում գրանցելու նպատա-

կով հայտերի պատրաստում» եւ «Համայնքախեն գույքագրում» թեմաներով, ինչպես նաեւ խորհրդատվություն է ապահովվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի ֆինանսական աջակցությամբ

Հայաստանում իրականացվող՝ «ՀՀ Մյունխենի մարզի բանախոսական ժառանգության համայնքախեն գույքագրումը, փաստաթղթավորումը եւ պահպանումը» վերնագրով՝ ՀՀ հայտի համար:

Կենտրոնի կառավարման խորհրդի՝ 2023 թ. հունիսի 26-27-ը Թեհրանում տեղի ունեցած նիստին Հայաստանը, որպես կենտրոնի անդամ պետություն, ընտրվել է կենտրոնի գործադիր խորհրդի անդամ, որի շրջանակում էլ պարբերաբար մասնակցում է խորհրդի աշխատանքային հանդիպումներին:

Թեհրանի կենտրոնի գործադիր խորհրդի 3-րդ համընկալման ընթացքում նախանշվել են այլ անդամ պետությունների հետ համատեղ մշակութային ծրագրերի իրականացման հնարավորություններ, մասնավորապես՝ «Կլիմայի փոփոխության նկատմամբ դիմադրողականության կառուցում» ոչ նյութական մշակութային ժառանգության միջոցով» եւ «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանություն երեխաների շրջանում» ծրագրերի ուղղությամբ:

Մշակույթ

Երիտասարդական օպերային ծրագրի մասնակիցների ձեռքբերումները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Դանիել Դանիելյանը** ընդունել է Ա. Սպենդիարյանի անվան օպերային եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի երիտասարդական օպերային ծրագրի ղեկավար **Լեւոն Ջավադյանին**: Հանդիպմանը ներկա էին նաեւ ծրագրի մասնակիցները՝ օպերային մեներգիչներ **Սիլվա Պետրոսյանը, Նունե Գրիգորյանը, Օֆելյա Համբարձումյանը** եւ **Գագիկ Վարդանյանը**:

Ողջունելով ներկայացրած ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը նշել է, որ հանդիպման նպատակն է հերթական անգամ անդրադառնալ արվեստագետների մասնագիտական ձեռքբերումներին, տարբեր հեղինակավոր հարթակներում նվաճումներ գրանցած արտիստների խրախուսման ու գնահատման մոդելին, ինչպես նաեւ վերահանել առկա խնդիրներն ու քննարկել անելիքները:

Լեւոն Ջավադյանը հանգամանորեն

ներկայացրել է 2020-2023 թթ. երիտասարդական օպերային ծրագրի մասնակիցների գրանցած հաջողություններն ու ձեռքբերումները միջազգային հեղինակավոր մրցույթներում եւ փառատոներում:

Դանիել Դանիելյանը բարձր է գնահատել երիտասարդական օպերային ծրագրի մասնակիցների ձեռքբերումները՝ շեշտելով, որ արտիստների ծավալած գործունեությունն ու ներդրած ջանքերն անչափ կարեւորվում են պետության կողմից: Նրա տեղեկացմամբ՝ ՀՀ կառավարությունը վերջերս հավանության է արժանացրել մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների եւ մրցանակաբաշխությունների մասնակցած եւ մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին դրամական խրախուսում տրամադրելու ծրագիրը:

Հանդիպմանը ներկա մեներգիչները ներկայացրել են իրենց գործունեությունը, վերջին տարիների հաջողություններն ու ձեռքբերումները: Նրանք վստահություն են



հայտնել, որ մասնակցելով բազմաթիվ միջազգային մրցույթների եւ փառատոների շարունակելու են կատարելագործվել եւ

հանրահռչակել հայկական մշակույթն ու արվեստը հեղինակավոր տարբեր հարթակներում:



Արամ Խաչատրյան - 120

Հետաքրքիր՝ է՛լ քաղաքացիների, է՛լ հետազոտողների համար

Հայաստանի ազգային արխիվի ցուցաբերումը Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի հետ համագործակցությամբ բացվել է Արամ Խաչատրյանի 120-ամյակին նվիրված ժամանակավոր ցուցադրությունը:

Բացման հանդիսավոր արարողությանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը, Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը, «Արամ Խաչատրյան» համերգասրահի տնօրեն Նորայր Նազարյանը, պաշտոնատար այլ անձինք, մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ:

Ցուցադրությունը Արամ Խաչատրյանի կյանքի և գործունեության հանրահռչակման նոր ու յուրահատուկ էջ է հանրության համար: Ներկայացված են ինչպես Հայաստանի ազգային արխիվում պահպանվող հանրությանը քիչ հայտնի նյութեր, այնպես էլ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում պահպանվող նյութերից՝ կոմպոզիտորի կենսագործունեության վերաբերյալ փաստաթղթեր, անձնական իրեր, ինչպես նաև նրա դիրիժորական փայտիկը:

ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ողջունել է ներկայացրած և կարևորել Հայաստանի ազգային արխիվի և Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի համագործակցությունը, որպես դրական օրինակ, որի արդյունքում՝ ստեղծվել է հնարավորություն՝ ծանոթանալու և բացահայտելու մեծանուն կոմպոզիտորի բազմաշերտ ժառանգությունն ու կենսագործունեության նո-



րանը էջերը: «Շատ ուրախալի փաստ է Արամ Խաչատրյանի 120-ամյակի շրջանակում ներկա գտնվել այս ցուցադրությանը, որն ամբողջացել է Հայաստանի ազգային արխիվի հազվագյուտ նյութերի ու տուն-թանգարանի ստեղծման համալրմամբ: Լիա-հույս են համագործակցությունը կլինի շա-

ղանակական աշխատանք, և կկարողանանք հանրության համար եւս հասանելի դարձնել արխիվի կարևորագույն նյութերը, որոնք վերաբերում են մեր մշակութային գործիչներին և մեծագույն հետաքրքրություն են ներկայացնում ինչպես քաղաքացիների, այնպես էլ հետազոտողների համար», - ասել է ԿԳՄՍ նախարարը և հույս հայտնել, որ հանրությունը կօգտվի այս առիթից, և ցուցադրությունը կունենա մեծաթիվ այցելուներ:

«Միջոցառման նպատակը Արամ Խաչատրյան անունը, որն աշխարհում ասոցացվում է հայ ժողովրդի հետ, հանրահռչակելն ու առավել ճանաչելի դարձնելն է», - ասել է Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Արթուր Ստեփանյանը:

Նրա խոսքով՝ ցուցադրությունում ներկայացված են բացառապես Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթեր, լուսանկարներ՝ Արամ Խաչատրյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ, Հայաստանի և այլ երկրների կառավարությունների մշակութային օջախներից ստացված փաստաթղթեր՝ մեծանուն կոմպոզիտորի ստեղծագործական հաջողությունների, նրա գործունեությանը տրված գնահատականների վերաբերյալ:

Ցուցադրությունը կգործի մինչև ապրիլի 12-ը:

Լեզվի կոմիտե

Հայերենի ուսուցման նոր ծրագիր

ՀՀ ԿԳՄՍՍ Լեզվի կոմիտեի նախագահ Սիրանուշ Դվոյանը հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում ամփոփել է պաշտոնավարման մոտ երեքուկես ամսվա գործունեությունը՝ ներկայացնելով կառույցի առջև ծառայած խնդիրները, զարգացման տեսլականը և առաջիկա անելիքները: Նա հակիրճ ներկայացրել է կոմիտեի ստեղծման պատմությունը և գործունեության առաջնությունն ուղղությունները՝ շեշտելով, որ Կոմիտեն լեզվական պետական քաղաքականություններ իրականացնող լիազոր մարմինն է Հայաստանի Հանրապետությունում և կատարում է Լեզվի օրենքը ՀՀ-ում լիարժեք իրացնելու գործառնությունը:

Անդրադառնալով առաջիկա աշխատանքներին՝ նա նշել է, որ հիմնական ծրագրերը բխում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրից ու պայմանավորված են վերջին տարիներին մեր երկրում տեղի ունեցած սոցիալական փոփոխություններով և դրանցից ծագող խնդիրներով:

Սիրանուշ Դվոյանի տեղեկացմամբ՝ ԿԳՄՍՍ Լեզվի կոմիտեն ազդարարում է «Հայերենը ոչ հայախոսների համար. հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգ» նոր ծրագրի մեկնարկը: Հինգ ընդունելով եվրոպական խորհրդի լեզուների իմացության ու գնահատման ընդհանուր շրջանակը (Common European Framework of Reference for Languages) և նույն շրջանակի «Լեզուների իմացության/իրազեկության համանվարական համակարգ, ուսումնառություն, դասավանդում, գնահատում» հայերեն տարբերակը՝ նախատեսվում է մշակել հայերենի առանձնահատկություններից բխող՝ հայերենի իմացությունը ստուգող և գնահատող վեցաստիճան (համապատասխանաբար՝ A1, A2, B1, B2, C1, C2) էլեկտրոնային համակարգ:

«Համակարգը հնարավորություն կտա ոչ հայախոսներին սովորել հայերեն, ստուգել լեզվական իմացությունը և ստանալ իմացության մակարդակը մշտն փոփոխական:



Համակարգը կգործի ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս», - նշել է Սիրանուշ Դվոյանը:

Քննարկումների փուլում է թվային որոնողական համակարգերում հայերենի՝ որպես կենսունակ լեզվի գործառնությունն ապահովող ծրագրի ստեղծումը: Թեև առանձին-առանձին մշակվել ու գործում են տարբեր բազաներ, ինչպես օրինակ՝ Հայ մատենագրության թվանշային գրադարանը, Արեւելահայերենի ազգային կորպուսը և այլն, բայց հայերենն այսօր համաքայլ չէ լեզուների տեխնոլոգիացման արդի միտումներին:

«Հայերենը, հայերենով ստեղծված մշակութային ժառանգությունը, հայալեզու իրողություններն արդի տեխնոլոգիական մարտահրավերներին համահունչ դարձնելու նպատակով կարիք կա եղած նախաձեռնությունների հետ համատեղ քննարկմամբ մշակել առավել ընդլայնված նախագիծ», - տեղեկացրել է բանախոսը:

Օրենքով Լեզվի կոմիտեին վերապահված գործառնությունների շրջանակում կառույցը պետք է նպաստի նաև հայերենի կանոնարկման սկզբունքների մշակմանը: Այս ուղղությամբ պաշտոնական միակ փաս-

տաթուղթը 2006 թ. հրատարակված Տերմինաբանական տեղեկատու է, որտեղ տրված են հայերենի բառակերտման, տերմինակազմության, տառադարձման, կետադրման գրական հայերենում գիտականորեն փաստված սկզբունքները:

Ըստ Լեզվի կոմիտեի նախագահի՝ վերջին տասնամյակներին հատկապես ուղիղ, ոչ միջնորդավորված թարգմանության ճանապարհով հայերենը հարստացել է նոր բառերով ու հասկացություններով:

«Լրատվամիջոցներն ու հանրային դաշտն իրենց հերթին տարբեր աղբյուրներից փոխառել ու շրջանառում են հատուկ անուններ ու բառեր: Հատկապես՝ հատուկ անունների դեպքում կարիք կա տարբերակված մոտեցմամբ մշակելու տարբեր լեզուներից փոխառվող հատուկ անունների գրության և արտասանության սկզբունքները: Կարիք կա նաև ի մի բերելու թարգմանված կամ նորաստեղծ հասկացությունները՝ համապատասխան բացատրություններով: Երկու ուղղությամբ էլ աշխատանքներ են տարվում Հայաստանի գիտական և բարձրագույն կրթական հաստատությունների հետ: Ոլորտային գիտնականների հետ համատեղ աշխատանքի միջոցով հնարավոր



կլինի մշակել լեզվական տարբեր հարցերին վերաբերող կանոնարկման սկզբունքներ՝ նկատի առնելով գրական հայերենի արդեն իսկ գոյություն ունեցող կանոնարկման ավանդույթը», - ասել է նա:

Կոմիտեի նախագահը, անդրադառնալով լեզուն գործառնելու հարցին, ընդգծել է, որ այն սերտորեն կապված է պատմական այն ժամանակաշրջանի հետ, որում կիրառվում է ենթարկվելով փոփոխությունների ու թարմացումների, և կանոնարկման հարցերն էլ առաջ են գալիս այս համատեքստում:

Դվոյանն անդրադարձել է նաև պետական լեզվին առնչվող իրավական կարգավորումներին:

«Դրանք նույնպես ժամանակի ընթացքում վերանայումների կարիք են ունենում», - համոզվում էր և հայտնել բանախոսը՝ որպես օրինակ բերելով «Գովազդի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ անելու նոր նախագիծը, որը մշակման փուլում է:

Կոմիտեի նախագահի կարծիքով՝ նոր ծրագրերի համատեքստում կարիք կլինի վերանայել նաև Լեզվի կոմիտեի կառուցվածքը՝ ստեղծելով նոր ստորաբաժաններ:

Հովհաննես ԹՈՒՄԱՆՅԱՆ
Կանանց ախպեր

Է՛յ կանանց ախպեր,
Է՛յ ճանանց ախպեր,
Արի՛, քեզ հետ բեր
Արեւի շողեր.
Բեր անուշահոտ
Ծիւ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վրտակ,
Երկինք կապուտակ,
Խատուտիկ հավքեր,
Ջրընգան երգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն.
Է՛յ կանանց ախպեր,
Է՛յ ճանանց ախպեր:



Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ
Մանկություն

Հուրհրում էր արեւն ուրախ,
Գետն էր գնում քաղցրակարկաչ.
Չորս դիս՝ գարնան կարմիր ծիծաղ,
Վարդեր կարմիր, կարմիր կակաչ:

Արտույտն երգով ճախրում էր վեր.
Արտներում խրխինջ ու կանչ.
Չորս դիս՝ գարնան կանանց թւեր,
Կանանց հովեր, ծովե՛ր կանանց:

Մեր մանկական ճիչն էր թնդում
Դաշտերի մեջ ցողաթաթախ.
Խայտում էինք զմրուխտ գետում, -
Եվ զրգնում էր արեւն ուրախ...



Վահան ՏԵՐՅԱՆ
Գարուն

Գարունը այնքան ծաղիկ է վառել,
Գարունը այնպես պայծառ է կրկին.
Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,
Ուզում եմ անուշ փայփայել մեկին:

Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես մազով են փակվում.
Շուրջըս վառված է մի անուշ տազնապ,
Մի նոր հուզում է սիրտըս մրրկում...

Անտես զանգերի կարկաչն են լսում,
Իմ բացված սրտում հնչում է մի երգ.
Կարծես թե մեկը ինձ է երազում,
Կարծես կանչում է ինձ մի քնքուշ ձեռք...

Միսաք ՄԵՃԱՐԵՆՑ
Երազ օրեր

Կարմիր ծաղիկ մը գարունի
Ատուռ մ՝ ինձի նըվիրեցիր.
Ըզգացի թե տենդեր ունի
Երազկոտ միտքըս ուշացիր:

Եվ ըղձակաթ իմ հեգ հոգիս
Ըզգաց սիրտիդ հուրքն արծարծուն,
Ու մետաքսե ուղի մը գիս
Մեր-ծաղիկին տարավ ածուն:

Խանդաղատանք մը հորդեցավ
Իմ նըվաղկոտ լանջքիս տակ՝ ուր
Դողաց սիրո սարսուռն անցավ՝
Ու թովանքը համբույրին հուր:

Հոն ժղպտեցավ կյանքը ինձի,
Հըմայքներու հույլովն անցավ,
Եվ ուրվական մը կասկածի
Անոր մոտեն երբեք չանցավ:



Դանիել ՎԱՐՈՒԺԱՆ
Գարնան անձրեւ

Դաշտերում վրա իր տրտմությամբ համառոտ
Անձրեւը չէ՛ ասիկա:
Գարնան ջաղբն է՛ որ ցանքերում վրա անհուն
Լուսացընցուղ կը տեղա:

Աստղերն անհայտ, կարծես հալած արեւեն,
Տեղատարափ կը թափին,
Եվ կը լըվան իրենց լույսին մեջ փաղփում
Անդաստաններն ու այգին:


Կապույտն հանկարծ կու լա բուռն ծիծաղեն,
Եվ կը տեղա աղամանդ.
Կը լուսնան կույր աղբերակներն ու կ'երգեն
Իրենց ծընունդն արգավանդ:

Անհունն ի վար կը հեղեղվին շառաչով
Մեծ կաթիլներ շափյուղա,
Լի արեւով, ցնծությունով, կապույտով,
Ծիծաղներով սատափյա:

Մարգերը թաց կ'արտաշընչեն զովություն...
Կը լըվացվին գառնուկներ...
Բո՛ւյրը հողին, հողին բո՛ւյրը, ծավալուն
Կը լեցնե գյուղն ու եթեր:

Ու արտերո՛ւս, արտերո՛ւս մեջ քրտնաշատ
Իմ ցորյաններս համեցող
Նոր ուժերով հորդափոսա՛ն կ'ընծյուղին
Կայլակներու մեջ ի լող:

Եվ մաքրված անտառին մեջ, այս պահուս,
Ըստ իմ գյուղիս հեքիաթին-
Կը ծնի եղնիկն, գոտիին տակ ծիրանի,
Եղնորդ մը՝ նման լուսինին:



Եղիշե ՉԱՐԵՆՑ

Տաղ սիրո
ձոնված ապագայի պարմանիների
(հատված)

Ա

Յուրաքանչյուր անգամ, երբ գարունը բացվում է
Եվ նոր կյանք է մտնում նոր մի սերունդ -
Արեգակը թվում է ծնծղա եւ երկիրը բուրում է
Անկրկնելի բույրով բոլոր պարմանի սրտերում: -

Յուրաքանչյուր անգամ եւ ամենայն ուրույնությամբ,
Յուրաքանչյուր անգամ տարբեր ու առանձին,
Յուրաքանչյուր անգամ անհո՛ւն մի թարմությամբ,
Եվ յուրաքանչյուր անգամ - անծի՛ր...

Ո՛վ դու, որ առաջին անգամ իբրեւ քեզ ընծայած
Եվ միայն քեզ համար սահմանած մի բարիք -
Ընդունելու ես կույսի խոստումնալից հայացքը
Քո օրերի դժնյա ճանապարհին, -

Որ իբր տոթ ողկույզ՝ ճնլելու ես շրթերը
Եվ գգվանքները դեռ դաշն քո ընկերուհու -
Սիավափ կ երգում եմ ես մտադական քո սերը,
Իբրեւ հավերժական խորհուրդ...



Պարույր ՍԵՎԱԿ

հատված «Երգ երգոց» պոեմից

Գարունն այս անգամ ձմռանը եկավ,
 Այն էլ հյուսիսում,
 Ես բոլորովի՜ն չէի սպասում,
 Չմեռն այս վկա:
 Քեզ չփնտրեցի՜, չըրորնեցի՜
 Եվ... գտա հանկա՛րծ
 Ինչպես դու մի օր անունդ ես գտել,
 Օ Սուլամի՛ թա:

Գուրգեն ՄԱՅԱՐԻ Գարուն, հավատա...

Գարուն, հավատա՛, ես քեզ չեմ դավել.
 Գարո՛ւն իմ երկրի հողերի վրա,
 Լեցուն է ահա նորից իմ գավը,
 Ու խնում եմ ես կենացդ ահա...

Գեուրգ ԷՄԻՆ Հայաստանի գարունը

Ամեն գարուն՝ ինչքան ծանո՞թ,
 Այնքան նո՞ր է ու ցանկալի՜.
 Ամեն գարուն մի նո՞ր ձայնով
 Ու նոր սիրո պե՛ս է գալիս.

Տե՛ս, հավքերը հազարերանգ
 Հին բնե՛րն են վերադառնում.
 Ամե՛ն տեղ են դառնում նրանք՝
 Բայց ուրի՜շ է Հայաստանում. —
 Հայաստանում նրանց նման
 Պանդուխտ հայե՛րն են ետ դառնում,
 Ու բույն շինում, որ միշտ մնան
 Հայության բո՛ւյն Հայաստանում...



Մատթեոս ԶԱՐԻՖՅԱՆ

* * *


Հիմա աղվոր գարուն է.
 Եւ անցյալ օր,
 Մղում մ'համառ նորեն քայլերս մղեց հոն
 Խորն ամայի այն դաշտերուն.
 Եւ հուզումեն ինկա ծունկի

Կացինահար ծառն էր նման շիրմաքարի
 - Սեւ գերեզման մը խոժոռ —
 Բայց իր կողեն
 Արծվաթռռիչ միզակներու խրոխտանքով՝
 Բարունակներ ժայթքեր էին դեպի երկինք:

Անոնց մեջեն
 Նորափետուր թռչուններ ե՛րգ կ'երգեին...

Հովհաննես ԾԻՐԱԶ Գարնանամուտ

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
 Որ վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
 Ու երկինքը հոգուս մեջ, ու արեւը աչքերիս,
 Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք,
 Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին
 Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ծյունաթույր,
 Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
 Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաթույր,
 Ինչ թարմություն,- ասացին,- ի՛նչ թարմություն,- ու բացին
 Լուսամուտներն իմ առջեւ, ու ես իմ սիրտը բացել՝
 Անցնում էի երգելով ու շաղ տալով մայթերին
 Մանուշակներ ու վարդեր ու հասմիկներ հոգեթով,
 Կարծես մի ողջ բնություն մի պատանի էր դարձել,
 Քաղաք իջել լեռներից՝ կանցներ գմրուխտ հեքիաթով...



Շուշանիկ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ Գարունն եկավ

Գարունն եկավ... միտքս ծաղկեց
 Ել չեմ երգի ցավ ու դարդ.
 Վըշտի ժայռից ես գահընկեց
 Ընկա հովիտ ծաղկազարդ:

Սա շուտով ես վար կառնեմ
 Իմ քընարից սրգի թող
 Ազա՛տ երգով կը սավառնեմ
 Կիջնեմ սըրտիդ որպես ցող:

Եւ խրվելով իմ քընարի
 Նագուկ մեջքին ոսկեթել
 Գարո՛ւն կերգեմ-աչեր յարի՜
 Որոնք գիտեն սիրտ դյուրել:

Գարունն եկավ. փո՛ւչ աշխարհի
 Ել չեմ երգի ցավերից՝
 Եւ երկնառաք իմ քընարի
 Կը վանեմ թախիծ լարերից.

Ակսել ԲԱԿՈՒՆՑ Պատառիկներ նովելներից

Նստել եմ ծիրանի ծառի տակ, տաքանում եմ ինչպես քարը, ծյունից մրսած գետինը, ծառերը, որ դեռ մերկ են ու արդեն թխանում են արեւի ջերմությունից:
 Մերկ ծառերի արանքից երեւում է քաղաքը, գունավոր տները: Ծխի ու փոշու կապտագույն շղարշ է փռված քաղաքի վրա: Ավելի հստակ են երեւում մոտակա կավե տները, այգիների մեջ ընկած ամայի հնձանները:
 Քամին խշշացնում է չոր տերեւները, որոնք թռչում են քարերի վրայով, իրար հրում, փաթաթվում ոտքերիս եւ քչփչում, ինչպես առվակը, գարո՛ւն է, գարո՛ւն է...

«Բրուտի տղան»

* * *

Երեկոյի տաք անձրեւը նոր ծաղկած ծառերին, մայթի քարերին ու ծանր կավահողին բաշխել էր գուլ, պղտոր ջրի լճակներ ու ծանր ցեխ: Սպիտակ ամպերը սարերից սողացել էին դեպի քաղաք եւ անգլուխ կարավանի նման դանդաղ ու մուռնջ պտույտ էին անում փողոցներով, քավում կտուրներին:
 Տների բարձր հարկերը չէին երեւում ամպի սպիտակ քուլաների մեջ: Նրանք օրորվում էին, իրենց հետ օրորում տները, հեռագրասյուները, էլեկտրական լամպերը եւ նրանց ցոլքը՝ անձրեւաջրի պղտոր լճակներում:

«Սեւ հացը»

* * *

Կաքավաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույն: Քարի մոտ է բսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արեւից քարերը տաքանում են, եւ երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքվում է, գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

«Ալպիական մանուշակ»

Համո ՍԱՅՅԱՆ Գարունդ հայերեն է գալիս

Ձյուներդ հայերեն են լալիս,
 Հայերեն են հորդում ջրերդ:

Հավքերդ երգում են հայերեն,
 Խոփերդ հերկում են հայերեն,
 Հայերեն են տոկում գրերդ:

Արեւդ հայերեն է ծագում,
 Ծառերդ հայերեն են ծաղկում,
 Հայերեն են պայթում բառերդ:

Հունդերդ ծլում են հայերեն,
 Ձեռքերդ կռում են հայերեն,
 Հայերեն են լռում քարերդ:

Ձորերդ շնչում են հայերեն,
 Ձոռերդ ննջում են հայերեն,
 Հայերեն են տանջում ցավերդ:

Որքան էլ ձեռից գնացել,
 Դու էլի հային ես մնացել,
 Հայերեն են հառնում սարերդ:

Թող Աստված եղածը պահի,
 Եվ հետո ինչ էլ պատահի,
 Ձյուներդ հայերեն են լալու,
 Գարունդ հայերեն է գալու,
 Հայերեն են գալու դարերդ:

Փորձիր լրացնել


Ճանաչողական խճանկար

Ուղղահայաց

1. Սալվադոր ... (ծն.1904), իսպանացի նշանավոր նկարիչ: 2. Դրամատիկական ստեղծագործություն, թատերախաղ: 3. Եվ քո երգը թախծալի Իմ սրտի երգն է, կարծես, ... Քաղցր ու բաղձալի Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ (Վ.Տերյան): 4. Տարրերի պարբերական համակարգի IV խմբի քիմիական տարր, կարգահամարը՝ 50: 6. Անարատ, մաքուր, անխառն, անաղարտ: 8. Տեխնիկական հնարք կերպարվեստում, հիմնաշերտի վրա տարբեր գույն եւ տարբեր գույն եւ ֆակտուրա ունեցող նյութեր փակցնելը: 9. Լսիր, տղաս, ինձ կթաղես անհայտ մի տեղ, աննշան, Որ..., մարդիկ չգան շիրմիս քարը գողանան (Ավ. Իսահակյան): 10. ... ենք փողոցներում, ես քո սիրով, դու՛ ուրիշի: Այրվում ենք մենք հրդեհներում ես քո հրով, դու՛ ուրիշի (Ս. Կապուտիկյան): 13. Ավան ՅՍՍՀ եղեգնածորի շրջանում, Արփա գետի ափին: 14. ... Կունանբաե (1845-1904), դազախ լուսավորիչ-բանաստեղծ, դազախական գրականության հիմնադիրը: 16. Ամենեւին, բոլորովին, երբեք: 17. Անհոսք աղի լիճ Հայկական լեռնաշխարհում: 21. Գյուղ ՅՍՍՀ Արագածի շրջանում, Սեւ սար լեռան ստորոտում: 22. Գոհար Միքայելի ... (ծն.1924, Կահիրե), հայ օպերային ակնավոր երգչուհի, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի (1956): ՍՍՀՄ պետական մրցանակակիր: 23. Արսեն Հարությունի ... (1882-1953), հայ գրականագետ-քննադատ, ՅՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՅՍՍՀ ԳԱ ակադեմիկոս: 24. Ավստրիական գավառի Գերմանիայի քաղաքականությունը: 25. Քաղաքական եւ գրական լրագիր: Լույս է տեսել 1885-1923-ին, Մարսելում: 26. Լեւոն Միքայելի... (1889-1937), հայ պետական գործիչ, դիվանագետ: 1910-15-ին սովորել եւ ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1921-ին նշանակվել է ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչը Լեհաստանում, 1927-34-ին ՍՍՀՄ արտաքին գործերի ժողկոմի տեղակալ: 1934-1937-ին ՍՍՀՄ դեսպանը Թուրքիայում: 27. Սասնա ծռերից: 29. Թերակղզի Հյուսիսային ամերիկայի հյուսիսարեւելքում, Բերինգի ծովի, Բրիտանիայի ծոցի եւ Խաղաղ օվկիանոսի միջեւ: 30. Ճերմակ, ճերմակ ու ոսկեթել Մի ժապավեն կար մազին: Կարծես թե բեմ էր բարձրացել Խաղաղության ... (Ս. Ջարյան): 37. Տորկատո ... (1544-1595), իտալացի բանաստեղծ: Ֆեռարյան դուքս Ալֆոնսո II դ'Էստեի պալատական բանաստեղծը: Նրա ստեղծագործությունը մեծապես նպաստել է XVII-XVIII դդ.արեւմտաեվրոպական գրականության զարգացմանը, իսկ իր՝ կերպարը պատկերվել է Վ.Գյոթեի, Ջ.Բայրոնի եւ այլոց երկերում: Նրա «Ազատագրված Երուսաղեմ» պոեմը սիրված եւ տարածված է եղել հայ իրականության մեջ: 41. Իվան Սերգեևիչ ... (1818-1883), ռուս ակնավոր գրող, ծնվել է ազնվականի ընտանիքում: Նրա ամենանշանակալի գործը «Հայրեր եւ զավակներ» վեպն է: 43. Հայաշատ քաղաք Ամերիկայում: 44. Ածի ...-ն երբ հասնում է, ինքն է գայլին մոտենում, Բեկի աղջիկն հազար գլուխ ոչխար կուզե հարսնագին, Իսկ դու հոտաղ, մի ուլ չունես, շապիկ չունես դու կարգին (Հ.Շիրազ): 45. Հայկական տոնական եւ ծիսական թխվածք: 46. Մխիթար ... (1120-1200), հայ ակնավոր բժիշկ, բնագետ եւ փիլիսոփա: Հայ դասական բժշկության հիկնագիրը: Տիրապետել է մի քանի լեզուների: 48. Կյանքին վտանգ սպառնացող վիճակ, որը բնորոշվում է գիտակցության կորստով, արտաքին զրգիռների համոզեալ ռեակցիայի թուլացմամբ կամ բացակայությամբ: 49. Վայելուչ, շնորհալի, բարեկամ: 50. Լեւոն Աբգարի ... (1882, Դարաչիչակ, այժմ Ծաղկաձոր-1958, Լենինգրադ), հայ ակնավոր ֆիզիոլոգ, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ուսմունքի ստեղծողներից: ՍՍՀՄ ԳԱ ակադեմիկոս: ՍՍՀՄ ԳԱ Ի.Պավլովի անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի դիրեկտոր (1936-1950): 54. Եգիպտական աստվածուհի: Դիցաբանության մեջ հասկացվում է որպես պտղաբերության, բուսական աշխարհի, մահվան եւ կենդանության աստվածուհի: 55. Ախ, ուռենի, վշտիս ընկեր, ... երկրի հառաչանք: Սփռի վերաս դողող սովեր, Անհույս սրտիս սփոփանք (Ավ. Իսահակյան): 56. ... ազատ է, ես չեմ հանդուրժում Իմ վրա իշխող ո՛չ մի գործություն, Ո՛չ օրենք, սահման, ո՛չ ճակատագիր, ո՛չ չար ու բարի, եւ ո՛չ դատաստան: 57. Հեթանոս հայերի արեւի պաշտամունքը մարմնավորող աստված:

Հորիզոնական

5. Սմբատ Տեր-Սիմոնի ... (1840, Աշտարակ-1907, Մոսկվա), հայ բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս: Հայ նոր պոեզիայի հիմնադիր: 7. Կոնստանտին Դիմիտրևիչ ... (1824-1870), ռուս մանկավարժ-դեմոկրատ, գիտական մանկավարժության հիմնադիրը Ռուսաստանում: 11. Հայ ակնավոր գուսան (1846-1909), XIX դարի ամենամեծ աշուղը հայ իրականության մեջ: Նրա երաժշտական ստեղծագործությունը հայ աշուղական արվեստը բարձրացրել է նոր մակարդակի, բարերար ազդեցություն է գործել հայ աշուղների հետագա սերունդների վրա: 12. Ֆրանսուազ ... (ծն. 1935), ֆրանսիացի կին գրող: «Քոլոր ամուսնությունները հաջողակ են: Դժվարությունները հանդես են գալիս միայն այն ժամանակ, երբ սկսվում է համատեղ կյանքը» ասույթի հեղինակ: 15. Հայ ճարտարապետ: Գեղարդում 1233-50-ին իշխան Պողոս Խաղբակյանի պատվերով կառուցել է առաջին վիմավոր եկեղեցին: 18. Վիկտոր Ռուբենի ... (ծն.1931), հայ գրող, լրագրող: 1971-1974-ին «Հայաստան» հրատարակչության գլխավոր խմբագիր, 74-ից՝ տնօրեն: 19. Հրանդ Հովսեփի ... (1880-1938), հայ նկարիչ: Ծնվել է Կ.Պոլսում, սովորել է տեղի գեղարվեստական վարժարանում: 1905-ից հաստատվել է Փարիզում: Նրա աշխատանքները ցուցադրվել են «Անկախների սալոն»-ում: 1923-ին պարգևատրվել է «Պալմ ակադեմիկ» ոսկե մեդալով:



20. Լեւոն Եղիայի ... (1903-1938), սովետական պետական եւ կուսակցական աշխատող, փիլիսոփայության պրոֆեսոր (1931): 1928-ին նշանակվել է Երեւանի համալսարանի պրոֆեսոր, 1933-ին ՅՍՍՀ լուսժողկոմ: 24. _ Թող ...ի բոց հողմն իմ դեմ գա, ավագի վրայից հետքեր ջնջե, Որ մարդը երբեք տեղս չգտնի, իմ շնչած օդը մարդը չչնչե (Ավ. Իսահակյան): 28. ... լեռնաշղթա, գտնվում է Սեւանա Լճից արեւմուտք: 31. Երվանդ Ալեքսանդրի ... (1864-1931), հայ ակնավոր ազգագրագետ, բանահավաք, հնագետ: Հավաքել եւ հրատարակել է չափազանց արժեքավոր բանաստեղծական նյութեր: «Մարգարիտներ հայ բանահյուսության», «Ջավախքի բուրմունք» գործերի հեղինակ: 32. Նրբամիտ, խելացի: 33. Դրամական միավոր Չինաստանում: 34. Գաբրիել Օհանի ... (1827, Կ.Պոլիս-1862, Կ.Պոլիս), հայ կոմպոզիտոր, երաժշտական-հասարակական գործիչ: Նա հեղինակ է «Կիլիկիա», «Հայաստան, երկիր դրախտավայր» եւ ժողովրդականություն վայելող այլ երգերի: 35. Լույսի ուժի միավորը Միավորների միջազգային համակարգում: 36. Շենքի կամ կառույցի մաս ուղղաձիգ հենարան, նեցուկ: 38. Ժորժ ... (Ավրորա Դյուլան, (1804-1876)), ֆրանսիացի կին գրող: «Միայնակ իրենից ներկայացնում է մարդու սուկ սովերը, իսկ ով սիրված չէ, նա ամենուրեք եւ բոլորի մեջ միայնակ է» աֆորիզմի հեղինակ: 39. Ծառ ու ծաղիկ սրվալավով Բույր խընկեցին դյուրեկան, Ծեր Դեւ-Բեղն էլ ահեղ ձայնով երգեց վրսեն ... (Հովհ. Թումանյան): 40. Ով հանդիպեց ... մի թաս գինի ինձանից. Լոկ ես գինի չըմպեցի մի սեփական հնձանից (Սեւակ): 42. «Ով դու ..., աստվածահայր գործության (Գ.Վարուժան): 47. Լեոնարդո դա Վինչիի հայտնի կտավը «Մոննա Լիզա» կամ «...»: 51. Որեւէ պետության կողմից այլ պետության կամ ժողովրդի (ազգի) տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի գործադրում: 52. Ալան Մետիսոն ... (1912-1954), անգլիացի մաթեմատիկոս: Թագավորական ընկերության անդամ: Հիմնական աշխատությունները վերաբերում են մաթեմատիկական տրանսբանդային եւ հաշվողական մաթեմատիկային: 53. Եվ մութ խորունկ ... ուր սարսափ է, ու սոսկում,- Արյուահոս թող ցավի իմ մարմինը քո գրկում (Վ. Տերյան): 55. Գրետա ..., ամերիկյան կինոդերասանուհի, ազգությամբ՝ շվեդուհի: Դերասանուհու խաղի անկեղծությունը եւ բնատուր հմայքը նրան բերեցին համաշխարհային ճանաչում: 1941-ին հեռացել է կինոյից: 57. Անաստան, անխախտ, անհողողող: 58. Աստվածների կամայականություններին ընդդիմացող հերոս հին հունական դիցաբանությունում: Կորնոս քաղաքի հիմնադիրը: 59. Պետություն Արեւմտյան Աֆրիկայում: Սահմանակից է Սիեռա Լեոնեին, Գվինեական Հանրապետությանը, Փոլսկի ափին:

Կազմեց ժողա ՍՏԵՓԱՆՅԱՆԸ

